ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը կկայանա 2023 թվականի փետրվարի 1-ին՝ ժամը 15:00-ին:

Կից ներկայացնում եմ՝ քաղվածք կառավարման խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի նիստի № 06 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 2 թերթ:

«Բերքաշատի միջնակարգ դպրոց»
և «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ների միացյալ խորհրդի նախագահ՝ **Ա. Առաքելյան**

26. 12.2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11-21177-2022
26. 12. 2022 թ.

ՔԱՂՎԱԾՔ

«Բերքաշատի միջնակարգ դպրոց» և «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 26-ին նիստի № 06 արձանագրությունից

Նիստը գումարվել է 2022 թվականի դեկտեմբերի 26-ին:
Նիստին մասնակցում են խորհրդի 9 /ինը/ անդամներից 9-ը /ինը/:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարության մասին /զեկուցող, խորհրդի նախագահ՝ Ա.Առաքելյան/:

ԼՍԵՑԻՆ՝

Ա.Առաքելյանը ներկայացրեց, որ «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվելու է մրցույթ, քանի որ 2022 թվականի դեկտեմբերի 22-ին հայտարարված մրցույթը չի կայացել հավակնորդ չլինելու պատճառով:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2010 թվականի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2.2 կետի պահանջը՝ այն է՝ «Սույն կարգի 2.1-ին կետով սահմանված դեպքերում խորհուրդը տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշում: Խորհուրդը տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից հաշված, առավելագույնը եռամսյա ժամկետում (չներառելով ամառային արձակուրդի ժամանակահատվածը), կազմակերպում և անցկացնում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ»:

Հիմք ընդունելով վերոնշյալը.

ՈՐՈՇԵՑԻՆ

1. «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:
2. Փաստաթղթերի ընդունման ժամկետը սահմանել 2022թ.-ի դեկտեմբերի 27-ից մինչև 2023թ.-ի հունվարի 18-ը ներառյալ՝ մինչև ժամը 15:00-ն:
3. Մրցույթը նշանակել 2023թ.-ի փետրվարի 1-ին՝ ժամը 15:00-ին:
4. ՀՀ Կառավարության 2010 թվականի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ և 4-րդ կետերի պահանջների համապատասխան, խորհրդի որոշումը ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին և հրապարակել հայտարարությունը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՀ Արմավիրի մարզի «Բերքաշատի միջնակարգ դպրոց» և «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1. ՀՀ քաղաքացիությունը,
2. <<Հանրակրթության մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5.ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի դեկտեմբերի 27-ից մինչև 2023 թվականի հունվարի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի փետրվարի 1-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ գյուղ Նոր Կեսարիա, 14 փողոց, շենք 20:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094780003, 093517023, 093233108, էլեկտրոնային հասցե՝ norkesaria@schools.am: